Նվիրում եմ լավագույն ընկերոջս,
գործընկերոջս ու սիրելիիս:
Շնորհակալ եմ այն ամենի համար, ինչ անում ես:
Եվ շնորհակալ եմ, որ դու կաս:
Je t'aime, Սոֆի:

Bookmark

Զասթին Տրյուդո

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՏԱՐԱՐ

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Սարգսյանի
Վարդան Գալստյանի
Էմմա Կիրակոսյանի

ԵՐԵՎԱՆ
2018

Bookmark

ՀՏԴ 32.001:82-94
ԳՄԴ 66.0
Տ 927

Տրյուդո Ջասթին
Տ 927 Ընդհանուր հայտարար/ Ջասթին Տրյուդո.- Եր.: «Նյու Մեգ» ՍՊԸ, 2018.- 428 էջ:

«Ընդհանուր հայտարար» գիրքը Ջասթին Տրյուդոն գրել է 2014 թ., Կանադայի վարչապետ ընտրվելուց մեկ տարի առաջ և Լիբերալ կուսակցության առաջնորդ ընտրվելուց հետո: Ներկայացված են նրա մանկության հուշերը, մուտքը քաղաքականություն, առաջին ընտրարշավն ու կուսակցության նախագահ դառնալը:

Ջասթինն ամբողջ կյանքն անցկացրել է հանրային ուշադրության կենտրոնում: Լինելով Կանադայի ամենահայտնի վարչապետներից մեկի՝ Պիեռ Տրյուդոյի ավագ որդին, ապրել է բոլորի աչքի առաջ, բայց առաջին անգամ է անկեղծորեն պատմում իր կյանքի մանրամասները, որոնք միշտ մնացել են փակ դռների հետևում:

Ջասթինը խոսում է իր ծնողների, աշխարհի առաջնորդների հետ իր մանկության հանդիպումների, ծնողների ապահարզանի, եղբոր ողբերգական մահվան, պատանեկան վախերի, սեփական ուղին գտնելու դժվարության, սիրահարվելու և ընտանիք կազմելու, քաղաքականություն մտնելու որոշման և առաջին ընտրարշավի դժվարության մասին:

Գիրքը մանրակրկիտ ներկայացնում է քաղաքական այն միջավայրը, որտեղ նա մեծացել է, պայքարել, և անձնական դժվարությունները, որոնցով անցել է: Գրքում հիշատակվում են նաև կանադահայերը, որոնք դեր են ունեցել Ջասթին Տրյուդոյի կյանքում և դժվար ժամանակները հաղթահարելու գործում:

ՀՏԴ 32.001:82-94
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0825-4
Ջասթին Տրյուդո. «Ընդհանուր հայտարար» © 2018, «Նյու Մեգ» ՍՊԸ
Common Ground Copyright © 2014 by Justin Trudeau. All rights reserved.

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Իրավունքները ձեռք են բերվել «ԱՐԻ» գրական գործակալության միջոցով:
Published by arrangement with HarperCollinsPublishersLtd, Toronto, Canada.

Բովանդակություն

Ներածական խոսք - **Վարչապետ ընտրվելուց հետո** 7

Նախաբան 19

Գլուխ 1 – **Մանկությունս Սասեքս 24-ում** 29

Գլուխ 2 – **Պատանեկությունս Մոնրեալում** 89

Գլուխ 3 – **Ճամփորդելով Արևելք, գնալով դեպի Արևմուտք** 141

Գլուխ 4 – **Անտառները դյութիչ են, մթին ու թավ** 175

Գլուխ 5 – **Երկու բախտորոշ որոշում** 197

Գլուխ 6 – **Պապինո. ոտքից գլուխ քաղաքականություն** 231

Գլուխ 7 – **Կյանքը նոր վարչապետի դերում** 273

Գլուխ 8 – **Ճանապարհ դեպի ղեկավարում** 299

Գլուխ 9 – **Հույս և քրտնաջան աշխատանք** 343

Հավելված - **Ելույթների հատընտիր** 373

Երախտիքի խոսք 421

Լուսանկարներ 425

Bookmark

Ներածական խոսք

Վարչապետ ընտրվելուց հետո

Bookmark

Ավելի քան 17,5 միլիոն կանադացի 2015 թվականի հոկտեմբերի 19-ին քվեարկեց խորհրդարանական 42-րդ ընտրություններում[1]: Պահպանողական կուսակցությունը, որն իշխանության էր եկել 2006-ին, տանուլ տվեց: Այդ ընտրությունները նշանավորեցին Լիբերալ կուսակցության վերադարձն իշխանություն: Համայնքների պալատում նախկինում 36 մանդատի փոխարեն քաղաքական ուժն արդեն ուներ 184 աթոռ, հետևաբար ուներ կառավարություն ձևավորելու հնարավորություն: Հաղթանակի արդյունքում Ջասթին Տրյուդոն ընտրվեց Կանադայի 23-րդ վարչապետ:

[1] Կանադայի խորհրդարանը կոչվում է Դաշնային օրենսդիր մարմին: Բաղկացած է [ՄԲ] թագուհուց, Սենատից և Համայնքների պալատից: Ուղիղ, մեծամասնական ընտրություններով ընտրվում են Ստորին պալատի ներկայացուցիչները: Մեծամասնություն ունեցող քաղաքական ուժն առաջարկում է գործադիր իշխանության ղեկավարի՝ վարչապետի իր թեկնածուին: Ստորին պալատի և կառավարության ձևավորումից հետո վարչապետի առաջարկով [ՄԲ] թագուհին նշանակում է Սենատի ներկայացուցիչներին: (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

Հոկտեմբերի 19-ը Կանադայի համար կարևոր օր էր: Կանադացիներն ընտրեցին մի կառավարություն, որը խիստ տարբերվում էր տասնամյակից ավելի իշխող կաբինետից: Եվ ընտրությունը, իրոք, ակնառու էր:

2015 թվականի մեր գլխավոր մրցակիցները ներկայացրեցին իրենց պատկերացումները, որոնք այդ ժամանակից հետո հայտնվեցին ու տարածվեցին բազմաթիվ վայրերում: Դրանք կասկած ու անվստահություն էին սերմանում, հրահրում տարանջատման, խորացնում անապահովության զգացումը, աշխատանքը կորցնելու մտահոգությունն ու ապագայի հանդեպ մարդկանց վախը:

Մենք կանադացիներին առաջարկեցինք դրանից սկզբունքորեն տարբերվող ընտրություն: Նախ ստեղծեցինք Կանադայի դրական պատկերը, որը հիմնված էր այն հիմնարար համոզմունքի վրա, որ բազմազանությունն ուժ է, ոչ թե թուլություն, որ ազատ առևտուրը և ներգաղթը կարող են ստեղծել այնպիսի տնտեսական աճ, որն օգտակար կլինի շարքային քաղաքացուն, և որ Կանադան կդառնա աշխարհը վերափոխող, կառուցողական ուժ:

Եվ կանադացիներն արձագանքեցին: Նրանք ընտրեցին հույսը՝ վախի փոխարեն, տարանջատման փոխարեն՝ բազմազանությունը: Ընտրեցին բաց և բազմաշփում տարբերակը՝ մերժելով փակ և մեկուսացած երկիր լինելու հեռանկարը: Ավելին, նրանք որոշեցին ապագայի հանդեպ լավատես լինել՝ չնայած մարտահրավերներին: Որոշեցին առավել վստահել սեփական, հավաքական ուժին՝ բոլորի ու յուրաքանչյուրի համար ավելի լավ, ավելի բարեկեցիկ երկիր կառուցելու ճանապարհին:

Այդ ժամանակից ի վեր ամբողջ աշխարհում մարդիկ կար-

ծես թե ավելի ու ավելի շատ են հետաքրքրվում մեր նոր կառավարության գործունեությամբ: Նրանք տեսնում են մի երկիր, որն ունի գլոբալ ու տագնապալից միտումներին դիմադրելու ուժ: «Միշտ էլ հնարավոր է ավելի լավին հասնել»,- սա մեր քարոզարշավի ամենամեծ հավաքի ժամանակ եմ ասել:

Մենք համեստորեն հույս ունենք, որ ամբողջ աշխարհում մարդիկ կընդունեն այս ուղերձը:

Ներածական խոսքը գրելիս՝ արդեն 11 ամսից մի փոքր ավելի է, ինչ վարչապետ եմ: Իհարկե, ակնկալվում էր, որ շատ ժամանակ է պետք տրամադրել և բարձր տեմպ ունենալ, սակայն սրանք ընդամենը շեշտում են այս աշխատանքի մեծագույն մարտահրավերներից մեկը՝ չկորցնել ոտքի տակի հողը, շփվել մարդկանց հետ և առավելապես կենտրոնանալ ոչ միայն հրատապ, այլև կարևոր խնդիրների վրա:

Ինձ համար լուծումը բաղկացած է երկու մասից: Առաջինը՝ դուրս գալ Օտտավայի շրջանակից և կանոնավոր շփվել մարդկանց հետ՝ խոսելով նրանց հոգսերի մասին: Ամենուրեք լսել այն մարդկանց, որոնց ծառայելու համար եմ ընտրվել: Այս գործում օգտակար են թեկուզ մի քանի րոպեանոց զրույցը միջոցառման նոր մասնակիցների կամ փոքր ու միջին բիզնեսի ներկայացուցիչների հետ, նրանց խնդիրների քննարկումը կլոր սեղանի շուրջ կամ, ասենք, ավագ դպրոցում ու համալսարանում երիտասարդների հարցերին պատասխանելը: Այս ամենն օգնում է պարզել, որ ոչ բոլորն են ուշադիր լսել, թե այդ օրն ինչ են խոսել խորհրդարանում:

Եվ երկրորդը՝ պետք է առաջնային լինի ընտանիքին ժամանակ տրամադրելը: Տեսեք, ես իսկապես կարծում եմ, որ Սոֆիի[1] և երեխաների կողքին լինելն ինձ ոչ միայն դարձնում է ավելի լավ հայր և ամուսին, այլև ավելի լավ վարչապետ: Այն երեկոները, երբ երեխաներիս օգնում եմ տնային հանձնարարությունները կատարելիս, անկողնում լավ ծածկում եմ նրանց կամ էլ կիրակնօրյա խաղաղ առավոտները, երբ միակ կարևոր որոշումը վերաբերում է լանչից հետո արշավի գնալուն կամ մակույկ վարելուն, ինձ օգնում են, որ պահպանեմ մտքի հստակությունը և հիմնավորված դատողություններ անեմ:

Սա նաև կարևոր հիշեցում է, որ իրականում իմ գործն անում եմ ոչ թե իմ երիտասարդ ընտանիքի *հաշվին*, այլ *հանուն* իմ ընտանիքի:

Իհարկե, հավելյալ մարտահրավեր է այն, որ բացի երկրով մեկ ճանապարհորդելուց առաջին տարին լի էր միջազգային ճամփորդություններով: Օտտավայում կայացած երդմնակալության արարողությունից տասն օր անց մեկնեցի Թուրքիա՝ Անթալիայում անցկացվող G20 հանդիպմանը: Այնտեղից մեկնեցի Մանիլա՝ Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության համաժողովին: Մեկ շաբաթ անց ինձ Լոնդոնում միացան Սոֆին և դուստրս՝ Էլլա-Գրեյսը: Ամսվա վերջին գնացի Մալթա՝ Ազգերի բրիտանական համագործակցության հանդիպմանը, և Փարիզ՝ կլիմայի փոփոխու-

[1] Sophie Grégoire Trudeau - Սոֆի Գրեգուար Տրյուդո (ծնվ. 1975 թ.), Կանադայի վարչապետի կինը: Նախկին հեռուստամեկնաբան է: Այժմ զբաղվում է բարեգործությամբ: Իր ապագա ամուսնուն հանդիպել է 2003 թ., երբ միասին բարեգործական համերգ են վարել: 2004 թ. նշանվել են, 2005-ի մայիսի 28-ին ամուսնացել Մոնրեալի կաթոլիկ եկեղեցում: Ունեն երեք երեխա՝ երկու տղա և մեկ աղջիկ՝ Քսավիե Ջեյմս Տրյուդոն (ծնվ. 2007 թ.), Էլլա-Գրեյս Մարգրեթ Տրյուդոն (ծնվ. 2009 թ.), Ադրիեն Գրեգուար Տրյուդոն (ծնվ. 2014 թ.):

թյան շուրջ ՄԱԿ-ի միջազգային համաձայնության վերջնական բանակցություններին: Դրանից հետո ղեկավարել եմ Շվեյցարիա, Ճապոնիա, Լեհաստան և Ուկրաինա այցելած պատվիրակությունները, մի քանի անգամ այցելել Վաշինգտոն և Նյու Յորք, առաջին պաշտոնական այցս եղել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն:

Ոմանք քննադատեցին իմ կառավարության մանդատի վաղ շրջանում այդքան ծանրաբեռնված ճանապարհորդական օրակարգը, սակայն ես գիտեմ, որ այդպես ճիշտ էր: Կանադայի դերն աշխարհում թե՛ ռազմական և օգնություն տրամադրելու տեսանկյունից, թե՛ մեր առևտրային հաշվեկշռով և թե՛ միջազգային հեղինակությամբ իրական և նշանակալից ազդեցություն ունի կանադացիների կյանքում: Ակտիվիստները և քաղաքական գործիչները սիրում են ասել, որ «աշխարհն ավելի շատ ունի Կանադայի կարիքը», սակայն այդ հարաբերությունը երկկողմանի է: Աշխարհը մեզ անհրաժեշտ է այնքան, որքան մենք՝ աշխարհին:

Հաճախ լսում ենք, որ մարդիկ ցինիկորեն են վերաբերվում քաղաքականությանը: Նրանք չեն հավատում, որ քաղաքական գործիչները ներկայացնում են իրենց շահերը: Սակայն որքան շատ մարդկանց հետ էի խոսում մեր քարոզարշավի ժամանակ և հիմա էլ՝ կառավարության շրջանակում, այնքան ակնհայտ էր դառնում, որ մարդիկ հոգնել են ցինիկ լինելուց: Այդ մարդիկ ցանկանում են հավատալ մեր բնույթի դրական կողմերին: Մենք ռիսկի դիմեցինք, երբ քարոզարշավ սկսեցինք հենց այդ սկզբունքով՝ մարդկանց վստահելով:

Այս դասը վերաբերում է ամբողջ աշխարհին, չնայած որոշ մարդիկ ջանում են ընտրողներին հակառակը համոզել: Միայն

Կանադայում չէ, որ մարդկանցից լավագույնն են ակնկալում, ոչ էլ ճիշտ որոշում կայացնելու հարցում քաղաքացիներին վստահելն է զուտ Կանադային բնորոշ: Միակ բանը, որ մենք այլ կերպ ենք արել, հետևյալն էր. մենք ուզում էինք համոզված լինել, որ մեր վարած քաղաքականությունը խարսխված է կանադացիների համար ամենակարևոր արժեքների վրա:

Օրինակ՝ հնարավորությունների հարցում բոլորի հավասարությունը: Ես կարծում եմ, որ հնարավոր չէ իրական առաջընթաց գրանցել, եթե չկա տնտեսական այնպիսի հեռանկար, որը հաջողության հասնելու իրական և արդար հնարավորություններ է ապահովում բոլո՛ր քաղաքացիների համար: Կանադայի զարգացող և լավատեսորեն տրամադրված միջին խավն էր, որ անցած դարի ընթացքում ավելի լավ երկիր կառուցեց ոչ միայն ինքն իր, այլև մյուսների և իր երեխաների համար: Այս հաջողությունը պետք է խրախուսվի, և հենց այդ պատճառով են միջին խավի ամրապնդումն ու տարածումը մեր առաջնահերթ խնդիրները:

Նոր գաղափարներ ընդունելու պատրաստակամությունը և թափանցիկությունը կանադացիների համար կարևոր արժեքներ են: Մենք պարտավոր ենք այնպես անել, որ նրանք այդ արժեքներն ավելի շատ տեսնեն կառավարության ներսում: Սա նշանակում է, որ ժողովրդավարական պրոցեսներին քաղաքացիների մասնակցությունն ավելի իմաստալից դարձնելու համար պետք է նոր ուղիներ փնտրենք: Ես վստահ եմ, որ ցանկացած կառավարություն կշահի ավելի բաց և թափանցիկ մոտեցումից:

Նույնը վերաբերում է գենդերային հավասարությանը: Կանադացիները գիտակցում են, որ ամուր համայնքներ և ամուր

տնտեսություն կառուցելու համար պետք է խրախուսել կանանց և աղջիկների լիարժեք ներգրավումը: Սա նաև վերաբերում է գործարար աշխարհին և հանրային կյանքին: Մենք Կանադայի պատմության մեջ առաջին անգամ ձևավորեցինք մի կառավարություն, որտեղ արտացոլվեց գենդերային հավասարակշռությունը: Մեր նպատակն էր ունենալ այնպիսի կառավարություն, որը կներկայացներ բոլոր կանադացիներին և կընդուներ նրանց բոլորի շահերից բխող որոշումներ:

Համագործակցությունը կանադական մեկ այլ արժեք է, որը կիրառելի է բոլոր բնագավառներում: Երբ բնական աղետների ժամանակ մարդասիրական օգնություն ենք տեղ հասցնում կամ կլիմայական փոփոխության գլոբալ մարտահրավերը լուծելու համար աշխատում ենք միջազգային գործընկերների հետ, միշտ էլ գիտենք, որ մեր կատարածի արդյունավետությունն աճում է՝ ընդհանուր նպատակին հասնելու համար միասնաբար գործելիս: Միասնական լինելը միշտ էլ ավելի լավ է, քան միայնակ գործելը:

Օտտավայում անցկացրած մանկությունս, երիտասարդ հասակում ճամփորդություններս, այժմ վարչապետ աշխատելու տարիներս հուշում են, որ իմ ձեռք բերած բոլոր արժեքներից ամենակարևորը կանադական համոզմունքն է, որ բազմազանությունն է ամենազորեղ ուժը: Բազմազանությունն է, որ պետք է մեր երկրին ու աշխարհին: Կանադացիները գիտեն, որ մեր մշակույթը, քաղաքականությունը և տնտեսությունն ամուր են մեր բազմազանության շնորհիվ: Մենք չպետք է վախենանք և կասկածենք, որ այդպես էլ շարունակվելու է: Մենք չենք կարող թույլ տալ, որ վախը մեզ հետ պահի դժվար, բայց անհրաժեշտ որոշումներից: Մենք չենք կարող

փախչել այն փաստից, որ վախը մարդկանց կյանքում իրական ազդեցություն ունի և հազվադեպ է լինում դրական:

Այդ պատճառով մենք պետք է ամեն ինչ անենք թե՛ Կանադայում և թե՛ ամբողջ աշխարհում՝ հույսը չկորցնելու համար: Չլինենք միամիտ, այլ հուսանք և հիշենք, որ մարդիկ ավելի շատ բարի են լինում, քան դաժան, և որ նրանք առատաձեռն են, բաց՝ նորաթարությունների հանդեպ և լավատես: Հենց այդ բնազդին պետք է ապավինենք՝ հարգելով մեր տարբերությունները, բայց միշտ հաշվի առնելով մեր ընդհանուր հիմքը և այն ընդհանուր բարօրությունը, որ կարող ենք ստեղծել, եթե միասին աշխատենք:

Bookmark